

ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱՐԵԿԻ ՄԷՁ

Նարեկ հայ հին գրականության մեջ բանաստեղծական միակ յուշակերտն է, որ իր խորքով, իր յօրինուածքով ու քերթովական արուեստով կը տիրէ մեր մշտնջին վրայ ու կը պարտաւորէ հիանալ եւ յանձնուիլ: Լուսաւոր երկինք մը չի ներկայացներ, աւելի ունի կոյս անտառի մը ծայրայեղ բուսականութիւնը եւ կենսաբուսական գեղը՝ դարերու արդաստանութեան պերճացած: Հողէն աւելի տիրողն է մթնոլորտը բոցավառ նշողումներով, չընդ սեւազգեստ երեւոյթներով եւ հրայրեաց ստուերներով ու խոռոչներով, որոնք նկարչական երանգապնակ մը կը կազմեն: Եթէ հեղինակը ապրած ըլլար Եսփիղէսի դարաշրջանին, գուցէ ունենայինք Պրոմէթէոս մը, բայց Գրիգոր Նաւակացի ինքզինք կը դնէ հազար թուականի շեմին, երբ մթնոլորտին մէջ աշխարհիս հրկիզման տեսիլն է որ կ'երեւակայուէր ու մարդուս կեանքը արհաւիրելի տրամ մը դարձած էր: Բանաստեղծը ինչպէս կեանքին, նմանապէս այդ տրամին առջեւ անտարբեր չէր կարող մընալ:

Ամէն բանաստեղծի դործն ու պարտքն է կեանքին ու կեանքի պայմաններուն եւ ժամանակի եղելութիւններուն մէջ ծածկուած թաքուն իմաստը վեր հանել, ու ստեղծել համապատասխան քերթովական տարազ մը, կազմել բանաստեղծական աշխարհ մը ու զգալի ձեւով ցոյց տալ այդ տրամը: Բաւական չէ լոկ ընդունիլ անխոստափելին կամ ենթարկուիլ այդ տրամին

մին՝ կրաւորական կեցուածքով, եւ կամ պարզապէս անիծել ու ժխտել այդ տրամը՝ ամուլ մտայնութեամբ: Բանաստեղծին պաշտօնը ու դերն է կեանքի եղելութիւններու եւ դէպքերու յաջորդութեանց համաձայն ինքզինքը կազմաւորել ու կերտել, դիրք մը բռնել ու վեր հանել այդ եղելութեանց խորհուրդը եւ նշանակութիւնը: Նարեկ Աղօթամատեանին յօրինումը հաւանօրէն այդ տրամին խորհուրդը՝ եթէ ոչ բացատրելու, բայց գոնէ ցուցադրելու համար կատարուած ըլլայ:

Նարեկի յօրինուածքը

Սովորաբար Նարեկը նկատուած է աղօթամատեան մը, ու բնական է որ այս տեսակէտէն քննարկուած, իր կազմը կը ներկայացնէ պարզապէս խմբաւորում մը աղօթական գրութիւններու, յօրինուած հոգեկան այլադան վիճակներու ազդեցութեան տակ ու ներքին տեսակ մը յուզումով: Սակայն իրականին մէջ այդ գրութեանց յօրինուածքը աղօթքի կազմին պէս պարզ չէ. անոնք մեծ չափով մեզի կը ներկայացնեն նկարագրական հոգեւոր մը կեանքին եւ ներքին վիճակներուն, ըստեղծելով հարուստ պատկերաշարք մը այդ հոգեւոր ներաշխարհին: Այդ հոգին ալ յինքեան կը ներկայանայ իբր մարդկային ընդհանուր հոգին, որով տրուած պատկերը կը ստանայ տարածականութիւն, ինչպէս զանազանաւ է մարդկային կեանքը: Միւս կողմէ այդ մարդկային հոգին Նարեկի մէջ կը ցուցադրուի

ինչպէս Գրիգոր կը տեսնէ ու կ'ապրի անոր կեանքը՝ իր անձին մէջ:

Իրապէս Նարեկի ՀԲ գլուխին մէջ Գրիգոր ուղղելով իր խօսքը վանականներու խումբին, կ'ըսէ թէ գրաւոր խորտիկներու այս սեղանը ընծայեցի ձեզի, որով ընդունեցէք այս խոստովանութիւնը. ըսկըզնահօրմէ սկսելով մինչեւ անոր սերունդին յետինը: Բիւր բամբասանքի ըստգրտանքներ գործած վկայեցի. «կամայականն յանձնառութեամբ հաստեցի եզի զիս ամենայնիդ պարտական չարեաց»... «ես միայն եմ եւ ոչ այլ ոք. ես ամենայնն եւ յիս ամենեցուն»: Հետեւաբար որքան Նարեկ կեանքի դէպքերու եւ հոգեւոր տրամադրութեանց համամարդկային պարունակութեամբ գեղուն, իրականին մէջ կը մնայ՝ նոյնքան արմատապէս անհատական գործ մը, զուտ անձնական, ամէն դէպք ու պատահար ապրուած եւ տեսնուած, գոնէ երեւակայալ ձեւով, ամէն տրամադրութիւն եւ մտածութիւն զգացուած եւ խորհրդածուած:

Եթէ ուզենք նկատել Աղօթամատեանին յօրինուածական ծրագիրը, կարելի է ըսել թէ առաջին չորս գլուխները կը կազմեն կարծես ներածութիւն մը: Երրորդին մէջ հեղինակը կը յայտնէ Աղօթամատեանի ընդհանուր բնոյթը, այսինքն է դիրքը պիտի ըլլայ «պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ դամենեցունց ունի զկրից պատահմանց նշանակեալ յիւրում պատկերի իբր կցորդ մեծգիտական կարեաց համայնից»: Գիրքը կարգացողներու համար կը խնդրէ Աստուծոյ բժշկութիւն՝ հոգիներու, եւ մաքրութիւն՝ յանցանքներու. հուսկ կ'աղաչէ Աստուծոյ որ իր գորութեան չունչը միանայ իրեն շնորհուած այս ստեղծագործութեան: Չորրորդ գլուխին մէջ կը սկզբնաւորէ մեղքերուն եւ յանցանքներուն խոստովանութիւնը, որ ամենեւին զաղար պիտի չունենայ յաջորդաբար:

Երբ իրերու այս վիճակին մէջ կը փնտռէ զարման մը, կը համարի թէ արտասուքը կրնայ ըլլալ այս դարմանը, ու ինք պիտի չզաղրի արտասուելէ. ծանօթ է ա-

մէնուս թէ ինչ տեսակ պատկերացումով կը բացատրէ իր անկարողութիւնը թիւերով ամփոփել իր մեղքերը: Բնական է պիտի չգոհանար միայն յանցանքները նկատելով, պիտի ուղէր քննել ու գտնել անոնց բիւրաւոր պատճառներն ալ, չարը, գլխաւորապէս Չարին դեւը, որու առաջակայութիւնը այնքան կը զգացուի Նարեկի աղօթքներուն մէջ: Մեղապարտ մարդուն բարոյական կեանքը կազմող այս այլադան տարրերը Նարեկի մէջ կը շօշափուին ու կը ներկայացուին, ինչպէս ծանօթ է, ոչ թէ վերացական ու տեսական գիտումով, այլ զգալի եւ նկարագրական ձեւով, որակումներով, տեսարաններու պատկերացումով, բնութեանէն առնելով ինչ որ կրնայ այդ նպատակին ու իր կիրարկած արուեստին ծառայել, օգտագործելով նաեւ պատմական դէպքեր ու անձերու տիպարներ, նմանապէս մարդկային կեանքի պատահարներն ու իրականութիւնները: Ասով Նարեկ ընդարձակ պատկերասրահ մը կ'ըլլայ, ուր կը ցուցադրուին մարդուս բարոյական ու հոգեկան կեանքին ելեւէջները, դէպքերն ու տեսարանները: Սակայն յինքեան կառելի չէ ըսել թէ Գրիգոր իր բովանդակ կեանքը, իր ամբողջ քերթովական ներշնչումը ուղած ըլլայ ամփոփել ու սպառել միակ քերթուածի մը՝ Նարեկի մէջ. «Գումարք խմբից»ը, Տաղերը մեզի ցոյց կու տան Նարեկացիի բանաստեղծական անձնականութեան ուրիշ երկու տարբեր երվնաւորումներ, նոյնքան ինքնատիպ եւ նոյնքան չքեղ:

Բնագանցական իրականութիւն

եւ քերթովական արուեստ

Ուեւ բանաստեղծ գիտում ունի ներկայացնել իր գործին մէջ իրականութիւն մը, այսինքն ներքին գոյավիճակ մը կամ զգացական տրամադրութիւն մը, որ կը խուզարկուի, կը հետազոտուի ու կը քննուի. որովհետեւ ան է որ կը ցուցադրէ եւ կը լուսաւորէ բնագանցական էութիւնը որ-

եւէ գրութեան. այս պատճառով՝ բանաստեղծները մանրամասն կ'ուսումնասիրեն իրենց էութեան խորը այդ տեսիլը՝ անոր իրականութեան մէջ թափանցելու համար. այս աշխատանքէն չեն փախչիր՝ ինչ ձեւով ու կերպարանքով ալ ներկայանայ, մանաւանդ թէ ան իրենց սիրելութեան առարկան կը դառնայ: Բայց երբ կը հարկադրուին արտայայտել կամ ներկայացնել այդ իրականութիւնը, նոյն ատեն իրենց համար կը սկսի ներքին պայքար մը, այսինքն՝ կը զգան դժուարութիւնը ներկայացնելու այդ իրականութիւնը իր ամբողջական ու լայնարձակ մերկութեան եւ յստակութեան մէջ. այդ պահուն իրենց կը թուի քերթողական արուեստը, ու մանաւանդ հեռադիտութիւնը՝ լաւագոյն միջոցը արտայայտութեան. բանաստեղծն ալ կը ջանայ ընծայել այդ արուեստին ստեղծագործ արժէքը: Հեռադիտութիւնը կ'ընձեռէ գրողին շարադրութեան կազմաւորեալ եղանակներ ու տարազներ: Բնական է ասով բանաստեղծը չի յանդիր վեր հանել ու ներկայացնել էապէս իրականութիւն մը, այլ իրականութեան մը շողշողումը՝ կտրատուած պատկերացումներու այլեւայլ կարգերով, որով դիտողը կամ ընթերցողը կ'ունենայ տպաւորութիւն մը տարածուն ու աստանդական, եւ բուն իրականութիւնը մերթ կըրնայ քողարկուիլ, կամ նոյնիսկ եղծանիլ՝ պատկերներու նշանակած եւ ցոյց տուած այդ կատարի թաւալումին մէջ: Այն ատեն բնագոյնական իրականութիւնը կարծես կը փոխարկուի ներկայացման ու արտայայտման ոճի մը, որ կը ձգտի մինչեւ տիրել եւ նշուիլ. ասկէ՝ ոճի այն անսովոր միջնորոտը, որ նաեւ Նարեկ Աղօթամատեանի մէջ մեր զգայարաններուն կը թուի միակ իրականութիւնը ըլլալ:

Բայց դժուարին է մերժել որ Նարեկացի իր Աղօթամատեանը գրելով չունենայ իր մտքին մէջ բնագոյնական իրականութիւն մը, կամ աւելի որոշ բնագոյնական տեսութիւն մը, որ ընկերէ իր խօսքին, իր զգացումներու արտայայտման, իր մը-

տածութիւններուն՝ իրր ներքին ազդակ իր հոգեկան ապրումին, իր նպատակ իր ձգտումներուն:

Բնագոյնական իրականութիւնը
Նարեկի մէջ

Անհնարին է մերժել որ Գրիգոր Նարեկացիի պակսի ascèse մը, այսինքն իր էութեան գերբնական կատարելագործում մը. այս իրականութիւնը նպատակն եղած է իր գոյութեան եւ կեանքին: Սակայն ուշադիր կարդալով Նարեկը, չենք տեսներ որ հեղինակը այս բնագոյնական ու բարոյական տեսութենէն ուղղակի առաջնորդուած ըլլայ:

Մեր հեղինակները, նման Եւաքր Պոնտացիի մը, կամ Գրիգոր Նիւսացիի եւ կամ Կեղծ Դիոնիսիոս Արիստագացիի չեն դիմած mystique – աստուածաբանական տեսութիւններու, վերացումներու եւ վերլուծումներու: Իսկապէս Նարեկը mystique փորձառութեան մը արդիւնքը չէ, ուր գրողը Աստուծոյ հետ իր միութեան կեանքին նկարագրականը, չըջայեղումներն ու հանգրուանները ներկայացնէ, հաղորդելով նաեւ իր հոգւոյն հեւքերը եւ իր յոյսերը ու նկարագրէ իր տեսիլները, մեղի ցուցնէ իր հոգւոյն վերելքն եւ թռիչքը, երանական տեսութեան պատճառած հրճուանքը, իր հոգեկան երջանկութիւնը: Բնական է, կարելի չէ ըսել որ պակսի Աստուածայինին զգացումը, բայց Նարեկի մէջ այդ զգացումը հաստատուած է տարածականութեան քանակին վրայ՝ զգալի պատկերներու եւ ասացումներու տարողութեամբ. որով հոգեկան աշխարհի մը անհունութիւնը ուղղակի չի նկատուի: Մտածել նաեւ որ Գրիգորի համար Նարեկի մէջ Աստուածայինը բնագոյնական ու փիլիսոփայական բնոյթ չունի, այլ մարդկային կերպարանքով էութիւն մըն է, եւթակայ կըրելու եւ ողորմելու, յայտնուող՝ փրկաւորութեան խորհրդանշաններով:

Գուցէ Նարեկացի, ազդեցութեան ներքեւ Գրիգոր Նիւսացիի mystique աս-

տուածաբանութեան տեսակէտներուն, իբրը զլիսաւոր եւ տիրող տարր նկատած է՝ իր ascèseին մէջ՝ պայքարը չար կրքերու դէմ: Այս պայքարը ծայր կու տայ Նիւսացիի համեմատ՝ երեք ճամբաներու առաջինին սկզբնաւորութեան, բայց չի դադարի ամենեւին յաջորդ երկուքին մէջ ալ: Այս պայքարին արդիւնքը պիտի ըլլայ ըստեղծել ինքնակեդրոնացում եւ ներամփոփում անձին մէջ, հեռացնելով իրմէ զգայական բոլոր իրերը. իսկ այս հեռացման ալ պտուղը պիտի ըլլայ ազատիլ որեւէ մտահոգութենէ, ազատիլ վախէ ու շառագունանքէ Ստեղծողին հանդէպ. այս ճամբով է որ հոգին պիտի վերագտնէ իր որդիական վստահութիւնը հանդէպ Աստուծոյ: Անկարգ կրքերէ այս անջատումը եւ մերձեցումը, կամ աւելի որոշ, միաւորումը Աստուածայինին՝ կ'ընձեռեն հոգւոյն առաջին լուսաւոր ծանօթութիւնը Աստուծոյ, ինչպէս նաեւ կու տան նմանակցութիւն մը Աստուծոյ: Սակայն Աստուծոյ այս ծանօթութիւնը հոգւոյն հայելիին մէջ, յատուկ նկարագրին է երկրորդ ճամբուն մէջ գտնուողներուն, ու ան կը համեմատուի ամպին հետ. այսինքն՝ հոգին զգալի ու տեսանելի իրերէ դէպի անտեսանելիները ու անզգալիները յառաջացած պահուն կը նկատէ որ զգայական իրականութիւնները կը մթաղնին՝ իբր ամպէ մը ծածկուած ըլլան, ու այսպէս հոգւոյն աչքերը կը հրահանուին թաքուն իրերու հայեցողութեան: Այս կէտին է որ բուն mystique կարգի փորձառութեանց մասին նկատողութիւններ կը կատարուին: Նարեկը կազմող աղօթքները սովորաբար կանգ առած են այդ կէտին վրայ, ու մեծ մասով նուիրուած են ինքնակեդրոնացման եւ պայքարի ճիւղերուն: Աստուծոյ նկատմամբ ալ՝ հաւատքով ըստացուած ծանօթութեան ստուերազրուութեան. քիչ անգամներ միայն Աստուծոյ ծանօթութիւնը ուղղակի լոյսով մը կը յայտնուի ու պարզապէս հաւաստումի խօսքով մը:

Այսպէս Նարեկ Աղօթամատեանին բոլոր զանգուածը կազմողը կ'ըլլայ մեղքին

խմորը՝ այնքան ծաւալուն եւ թափանցող: Ու անոր մէջ ներկայացուած զգալի իրականութիւնը տրամի եղելութիւնն է՝ իբր ամէնօրեայ ապրում կեանքի բարոյական ցաւերու եւ անձկութեանց փոթորիկէն ծնած: Պարզ է որ մեղքերու նկարագրութիւնը չի կատարուիլ գոհունակութեամբ, այլ արդարութեան պարտականութիւն մը կատարելու: Միւս կողմէ, որքան արդարութեան ըմբռնումը կը լուսաւորուի իր մէջ, այնքան աւելի յանցապարտ ըլլալու գիտակցութիւնը կ'ընդարձակուի:

Այսպէս Նարեկ Աղօթամատեանը կ'ըլլայ վշտաղին սրտի մը պատմութիւնը, սիրտ մը զոհուած սիրոյ, բայց որ իր հետ կը բերէ բուռն եւ մշտատեւ ցաւ մը, որովհետեւ այդ սիրտը ունենալով հանդերձ էապէս Բացարձակին ձգտումը, դժբախտաբար Բացարձակը անհունօրէն անհաս կը նշմարուի. ո՛րքան մարդկային սիրտը ուղէ մօտենալ, այնքան ալ կ'աւելնայ անոր հեռաւորութիւնը, ու ասոր հետ կ'առաւելու սրտին ալ սիրոյ քաղցը՝ ստեղծելով տազնապալից վիճակ մը. Նարեկ այս ցաւատանջ վիճակին տուրքն է:

Բանաստեղծը կարծես մղձաւանջ մը ունի իր էութեան խորը, մեռած եւ կամ սպաննուած բան մը, ու փորձեր կը կատարէ ազատելու անկէ, բայց անկարող կը զգայ ինքզինքը այդ փրկանաւորման գործին: Ասկէ Նարեկի էջերը ողբերու, տաղ-տուկի եւ սանձուած յուսարեկութեանց փոթորիկումներ կը դառնան. նաւարեկութենէն բան մը ազատելու փորձեր: Ինչ ալ ըլլայ, մարդ էակին ողբերգութիւնն է՝ անհատի մը փորձառութեան տուեալներով ներկայացուած: Կարելոր էր որ քիչ մը անդորրութիւն, քիչ մը սիրտանք իջնէին այդ տազնապալած սրտին մէջ, Գրիգորի լուսաշող երանութիւն մ'ընծայելու. բայց Նարեկ սահմանուած է հայ մտքին եւ սրտին Մատեանը ըլլալ, որով հայ ցեղի ճակատագրին նման՝ ցաւալից, խորտակուած ու խորհրդաւոր:

Ուրիշ mystique բանաստեղծներու մէջ,

ինչպէս արեւմտեան գրականութենէն Ruysbroeckի կամ Յովհաննէս Խաչեանի, կը գտնենք բանաստեղծութիւն մը վճիտ, պայծառ, վերացած եթերային բարձրութիւններու, եւ ուր կը տիրէ գուարթ եւ լուսափայլ մթնոլորտ մը. անոնց ամէն մէկ տողին մէջ կը զգացուի քաղցրութիւնը աստուածային Անհունին: Յովհաննէս Խաչեանի համար կը դրէ Jacques Maritain, թէ «հայեցողութեան այս praticienը աստուածային ներշնչման ազդեցութեան ներքեւ, քնարական վճիտ ու պայծառ խորհրդանշներով, ու ինչ չափով որ մարդկային լեզուն կրնայ արտայայտել անարտայայտելին՝ այսինքն շատ պակասաւոր կերպով, կը ներկայացնէ իր ապրած mystique փորձառութիւնը: Այդ պահուն ուրիշ բան չ'ըներ, բայց լոկ կ'երազէ երգել»:

Այս տեսակէտով Նարեկացիի դործը գուցէ կարելի է համեմատել Փեթրարքայի մէկ գրութեան հետ: Umberto Marvardi իր I Problemi della Critica e la Poesia հատորին մէջ իրարու հետ կը բաղդատէ Փեթրարքայի այդ գրութիւնը եւ Ս. Օգոստինոսի Խոստովանութիւնները:

Խոստովանութեանց մէջ Ս. Օգոստինոս բնազանցական տեսակէտներէն առաջնորդուելով՝ կը հասնի գերադոյն եւ գերբնական պատճառի մը լինելութեան, պատճառ նաեւ իր անձին գոյութեան եւ էութեան: Նկատելով թէ ինչպէս իր էութիւնը ունի բնածին ձգտումը կատարելութեան դադափարականի մը, այս գաղափարականը կը գտնէ միայն կատարելութեանց ամենակատարելին մէջ, այսինքն Աստուծոյ: Երբ ինքը կը ձեռնարկէ գրել իր Խոստովանութիւնները, գործնականապէս հասած է արդէն այն կէտին՝ որ ժամանումի վերջին կէտն է մարդկայինին համար, եւ սկզբնաւորման կէտը աստուածայինին՝ հայեցողական դործունէութեամբ. այլեւս իր կեանքի գործելակերպը ամէն ձեւով կը համաձայնի այդ գործունէութեան:

Իսկ Փեթրարքայի Խոստովանութեան

գիրքը, De secreto conflictu curarum mearum, որ արեւմտեան նոր գրականութեանց մէջ գրական այդ սեռը կը սկզբնաւորէ, ցոյց կու տայ որ հեղինակը իր էութեան մէջ խորացած ժամանակ՝ այնպիսի գործեր կը կատարուին, որ լոկ կրօնական բանաւոր դադափարականի մը կը ձգտին, ու անկարող են բարձրանալ մարդկային տկարութեան ստորին աստիճանէն աւելի վեր: Հոն աւելի ստուերներ կը գտնենք՝ քան լոյսեր, աւելի հող՝ քան երկինք: Այս գրութեան մէջ հոգեբանական տարրերը այնպիսի ծանրութիւն մ'ունին, որ երբեք չեն յաջողիր իրենց սահմանէն վեր բարձրանալ, հասնելու համար այն կէտին՝ որ բաժանման կէտն է բարոյականութեան ու mystiqueի միջեւ: Սակայն միշտ ալ հեղինակին բաղձանքն եւ ձգտումը դէպի բարոյականութիւն այնքան բարձր են, որ ցաւի եւ զղջումի ճամբով գրողը կը հպի մաքրագործման եւ շնորհի:

Քերթողական արուեստը Նարեկի մէջ

Եթէ զուտ բնազանցական իրականութիւն մը հնարաւոր չէ որոշակի գտնել Նարեկի մէջ, բայց կարելի ալ չէ որ Գրիգորի մտքին մէջ որեւէ իրականութիւն եւ կամ տիրող նկատողութիւն գոյութիւն չունենայ: Նարեկ Աղօթամատեանը նըպատակ մ'ունի. գրողին մտքին մէջ յայտնի է դիտաւորութիւն մըն ալ՝ այդ աղօթքները յօրինած ատեն, բացի աղօթական նպատակէն. անոնք իր անձին յաւերժութեան եւ անմահութեան կոթողը պիտի կազմեն. ասկէ՝ մասնալատուել աշխատանքի ճիգ մը կը նշմարուի անոնց ձեւաւորման միջոց: Ասկէ զատ անոնք նաեւ իր հոգեկան աշխարհին, իր հոգեբանական վիճակին, իր ascétique զգացումներուն եւ ըմբռնումներուն պատկերացումը պիտի ըլլան: Իր «ես»ն է որ պիտի ցուցադրուի իր ինքնայատուկ էութիւն մը իր բաղմակողմանի ելոյթներով, նկարագրով, ներքին կեանքի գործունէութեան ինքնադրոշմով. «ես եւ ոչ այլ ոք» կը յայտարարէ: Այս տեսակէտներէ շար-

ժած՝ ապահովապէս Գրիգոր ազդուած է ներշնչող կամ լաւ եւս կերպական (formal) պատճառէ մը, պատճառ՝ որ կը համարիմ թէ ըլլայ քերթողական արուեստին տեսլականը. արուեստ մը որ ոչ միայն իր գործին կրնար ընծայել չքեղ շրջանակ մը, այլ նաեւ կենսունակութիւն, հաստատութիւն, ոյժ եւ հմայք, ինչպէս նաեւ ամէնէն աւելի որոշ եւ մանրամասնալ պատկերացումը իր ներքին կացութեան ու բարդ տրամադրութեանց. ասով բանաստեղծն ալ կրնար գտնել որոշ գոհունակութիւն մը:

Հարկաւոր է նշել թէ Գրիգոր հետախուզման եւ փնտռութեան մարդն է. այս փնտռութեան կարելի է ըսել թէ իր արուեստն ալ է, իր ամբողջ կեանքը փնտռութեան մ'եղաւ: Նկատել, քրքրել ու պըրպըտել տենդոտ ներհայեցումով իր յոյզերն եւ տրամադրութիւնները, իր բնագոյնի շարժումները, չարին ներգործութիւնները, դիւային հնարքները, որոնք կը յայտնաբերուին իր արհաւիրքից ուրուականներ, եւ կամ իր մարգածեւ երեւոյթներ նենգութեան, պղծութեան, հեշտութեան. այսքան ստուերոտ եւ խաւարչտին խորքեր կը գտնէ իր էութեան մէջ: Միաժամանակ չ'անտեսել նկատել նաեւ իր բաղձանքներն ու երազները, ակնկալութեանց անդայտ խաբկանքները ու իր նպատակները՝ իրը հեռաւոր դեղեցկութիւն, որ երբեք չի պայծառանար եւ չ'իրականանար: Հազարի շրջանին մարդկային կեանքի ողբերգութեան խորհուրդը շատ բարդ է. Նարեկացի այս խորհուրդն է որ կը ձգտի հետախուզել, ցուցադրել եւ լուսաւորել:

Այս քերթողական արուեստին արդիւնքը երեւոյթն ունի հոգեբանական հեռանկարի մը, ուր կ'երեւութանաւ բանաստեղծին անհանգարտութիւնը, վրդոփումները, իր կրելը. ու կը փնտռէ անդու ալ իր բոլորին, ինչպէս եւ իր գոյութեան իմաստը ու կը վրիպի գտնել՝ գոնէ քերթողական ճամբուն մէջ: Ասկէ՝ նաեւ վերսկսումը իր հետաքննութեանց ու ինքզինքը յանձնելը որակումներու,

մակդիրներու, փոխանուններու անսպառ շարքերու:

Այս արուեստին ամէնէն յայտնի եւ առանձնաշնորհալ յատկութիւնն է ողբերգականութիւնը, եւ կը ծագի գլխաւորապէս հակադրութիւններէ: Բանաստեղծին փափաքը, ձգտումը եւ նպատակը ուրիշ է՝ քան ինչ որ կը տեսնէ ու կը գտնէ իր անձին մէջ: Կը ձգտի ու կը փնտռէ լոյսի երանութեան դեղեցկութիւնը. բայց ինչ որ կ'երեւութանայ ու վեր կը հանուի՝ մութն է, խաւարը եւ սարսափը: Հաւանորէն ասոր մեծապէս նպաստած է նաեւ իր խառնուածքը՝ ինքնամփոփ, լռակեաց խստամբեր ու մահացեալ. բայց ասով հանդերձ խարաղանուած չարին ներգործութեան, որով կարելի չէր անդորրանալ: Իր վրայ ազդած է գուցէ նաեւ Նարեկ վանքի միջավայրը, որու գեղեցկութիւնը ունէր անհարկ ընդթ մը, ու բանաստեղծը գինքը շրջապատող այդ ամենի բնութեան կարելի չէր որ չզգար ճշուն մը ու ինքն իր մէջ խորանալ մը: Երբ կը ձեռնարկէ յօրինել Նարեկի աղօթքները, այդ բոլոր տարրերը մեծապէս կ'ազդեն իր մտքին եւ հոգեբանական վիճակին վրայ: Բանաստեղծական ստեղծագործութիւնը բուն բանաստեղծներու քով ժամանց մը չէ. ոչ միայն ինքնագիտակցութիւն եւ լրջութիւն կը պահանջէ, այլ յաճախ՝ որոշ անհատներու քով ցաւատանջ հանգամանքով կրնայ յայտնուիլ: Իր ծագումով կը յայտնաբերէ խորհուրդ մը, եւ ծնունդ է մարդկային մտքին գեղեցիկին հետ ունեցած հաղորդակցութեան: Բանաստեղծական որեւէ ճշմարիտ գործի մը ասացուածքներէն, պատկերներէն ու երաժշտութենէն անդին գոյութիւն ունի զգալի իրականութիւն մը՝ Գեղեցիկը, ինչպէս կ'արտայայտուի Wordsworth:

Գրիգոր այդ գեղեցիկը կը կրէ իր մէջ ու կը գրէ՝ Գեղեցիկը արտայայտուելու համար, կը գրէ Գեղեցիկը մարմնացնելու համար: Այս նպատակը կը մղէ գինքը աշխատանքի մը, այսինքն ընծայելու իր գրութեան այնպիսի ձեւ ու նկարագրի, որ յաւերժացնեն իր համբաւը. այս նպատա-

կը կ'իրականացնէ իր ընտրած ու կ'իրար-
կած քերթողական արուեստը: Աղօթա-
մատեանի բնազանցական նպատակը եւ
կամ տրամաբանական պարունակութիւնը
կը մնայ իբր հեռաւոր տուեալ մը, իբր
տրամաբանական տեսլական. գործնակա-
նապէս Նարեկի քաները մարմարէ զան-
գուածներ կ'ըլլան, անոնց վրայ կ'իրար-
կելու բանաստեղծին կողմէ իր քերթողա-
կան արուեստը. ու Նարեկ այս արուեստ-
ին մարմնացումն է:

Նարեկ՝ հոգւոյ մը պատմութիւնը

Այս ամէնէն կարելի է հետեւցնել թէ
Նարեկի մէջ հեղինակը կը ձգտի կարծես
աղօթքի ձեւին ներքեւ շարադրել կրօնա-
շունչ քերթուած մը, չափով մը mystique
— աղօթական, բայց աւելի քերթողական
նկարագիր ունեցող, երգելու համար Աս-
տուծոյ մեծութիւնը. բայց մանաւանդ՝
ինչպէս որ այս մեծութիւնը կը յայտնուի
աստուածային գծութեան եւ ողորմու-
թեան գործերուն մէջ:

Աստուծոյ գլխաւոր գործը՝ տիեզերքին
հետ, մարդս է, ու մարդը պիտի ըլլայ
նաեւ Գրիգորի քերթուածին նիւթը. մար-
դը՝ Աստուծոյ հետ ունեցած իր յարա-
բերութեանց մէջ, որով իր բարոյական
կեանքին մէջ: Դժբախտաբար այս տեսա-
կէտով մարդս միւլթարական ու հոգե-
պարար ոչինչ կը ներկայացնէ, գտնելով
իր էութեան խորը մեղքին եւ չարին աւե-
րող որդը: Գրիգոր կը քննէ ու կը վեր-
լուծէ չարին հանդէպ մարդկային հոգ-
ւոյն կրած հակադրեցութիւնները, կա-
տարած պայքարը, ու ասկէ ծնունդ ա-
ռած բաղման ախտանշանները. այսպէս
է որ արձանագրուած է Նարեկի մէջ
մարդկային հոգւոյն բարոյական պատ-
մութիւնը:

Իրապէս Գրիգոր իր անձին փորձառու-
թեան տուեալներով կը ձգնի պատկերա-
ցնել մարդ էակին բարոյական ողբերգու-
թիւնը: Ունի գիտակցութիւնը իր ոչնչու-
թեան, իր մեղապարտ վիճակին, իր թըշ-

ուառութեան, դէպի չարը իր հակումնե-
րուն. ո՛չ մէկ արշալոյս, ոչ մէկ աստղ իր
երկնքին մէջ: Բարեբախտաբար յանցան-
քի ու թշուառութեան այս վիճակէն յա-
ռաջացած ցաւադին տրամադրութիւնը
բանաստեղծին մէջ կը ծնանի մարդկային
հաղորդակցութեան զգացումը, որ ո՛վ
Գրիգոր կը դառնայ եղբայրը բոլոր մե-
ղաւորներուն եւ թշուառներուն. մանա-
ւանդ թէ անոնց անձնաւորումը կ'ըլլայ:
Իրապէս Գրիգոր ամբողջովին ծածկուած
է մեղաւորի դիմաւոր տակ, եւ դիւրին չէ
բուն իրականութիւնը նկատել այդ քողին
ներքեւ: Ծիշտ է որ մարդկութիւնը ներ-
կայացնելու այս կեցուածքը մեծցուցած
է Նարեկի տարողութիւնը, բայց կէս մը
այլափոխած Գրիգորի հոգեբանական վի-
ճակին ճշտութիւնը եւ խորութիւնը: Ինչ
ալ ըլլայ, իր սիրտը անսպառ տրամու-
թեամբ լեցուած է եւ ասոր գիտակցու-
թիւնը ունի բանաստեղծն ալ:

Այս հաղորդակցութեամբ Նարեկացիի
միտքը դուրսէ հեռուէն կը զուգարկի Gabriel Marcelի տեսութեան, որու համե-
մատ՝ իր Թատրոնի անձերը ոչ թէ իրենց
ապրումով ու գործերով, այլ իրենց էու-
թեամբ իրարու համապարտ ու համե-
րաշխ են: Անոնք կը յայտնաբերեն տեսակ
մը արդաստանոր անխտրութիւն, ուր էակ-
ները կը հաղորդակցին, եւ ուր անոնք կը
գտնուին ինքնին հաղորդակցութեան գոր-
ծին մէջ ու այդ գործին միջոցաւ: Marcelի
համաձայն՝ հաղորդակցութիւնը վե-
րաստեղծիչ ոյժ մըն է, կ'ընծայէ կենսու-
նակութիւն եւ կ'ընձեռէ էակներուն հարա-
դատութիւն, կը խորտակէ սահմաններու
կապերը, կը բանայ սրտերը. թափանցու-
մի անկարող ըլլալը՝ երբ այդ վիճակին
մէջ փակուած մնան, օտար մը կ'ընէ էակ-
ները ո՛չ միայն իրենք իրենց նկատմամբ,
այլ նաեւ ուրիշներու: Ընդհակառակն ըն-
դունիլ թէ մարդիկ իրարու կապուած են,
կը նշանակէ ըմբռնել զիրենք՝ իրենց dra-
maticque գոյութեան խորքին մէջ. կը
նշանակէ մերժել բանի մը առարկայ ը-
նել զիրենք, կը նշանակէ յարգել իրենց
էակաբանական խորութիւնը:

Նարեկ իբր ողբերգութիւն

Այսպէս Նարեկ կ'ըլլայ մարդկային
հոգւոյն պատմութիւնը՝ իր անկեալ վիճա-
կին մէջ, իր ստորաքարէ բնազդներով, իր
ամօթալի տկարութիւններով եւ իր յան-
ցապարտ անկումներով, որոնցմէ կը ճշնի
ձերբազատիլ. այս պատճառով՝ բուն
պայքար մը տեղի կ'ունենայ հոգւոյ եւ
նիւթին, մարդկային ստորին բնազդ-
ներուն ու եթերալաց ձգտումներուն
մէջ: Այս պայքարէն ծնունդ կ'առնեն փո-
թորկումներ, յուզում, յուսալքում եւ ա-
ւերներ: Միսին եւ արեան այս միալը կը
զգայ բանաստեղծը, ու սրտէն կողկողա-
ղին ողբ մը կը բարձրանայ դէպի երկինք.
այս պատճառով Գրիգոր Ողբերգութիւն
անուանած է իր Աղօթամատեանը: Որով
իրականին մէջ մեղքը, մարդուն յանցա-
պարտ եւ թշուառ վիճակը, մահուան մը-
տածութիւնը, անդենականը, զլխաւոր
ներշնչողները ըլլալով այս Ողբերգու-
թեան, անոր կ'ընծայեն թախծոտ, ճշիւ
եւ խաւարակուռ միջոցաւ մը, որ հայե-
կին ալ է բանաստեղծին հոգեկան վիճա-
կին: Կարգալով այդ իննըսունեւհինգ դը-
լուխները, մարդս կը գտնէ ինքնինքը
միշտ միեւնոյն պտուտքող յորձանուտին
մէջ:

Երբ Նարեկի էջերը կ'արձագանգեն այս
տողերն ու հեծեծանքները, բանաստեղ-
ծին աչքերը փակ չեն մնար զինքը շրջա-
պատող բնութեան իրերուն առջեւ: Ինքը
սիրած է բնութիւնը իր ինքնեկ զեղեցկու-
թեան մէջ, ինչպէս նաեւ իր ցոլացում
աստուածային զեղեցկութեան ու փայ-
լին. որով իր բանաստեղծի հայեացքը կը
գրաւուի բնութեան հմայքէն: Բնութիւնը
կը հայթայթէ Գրիգորի ատաղձ՝ իր հոգե-
կան տրամադրութիւնները արտայայտե-
լու եւ ներկայացնելու զգալի ձեւով ու
պատկերներով. ասով բնութիւնը բանա-
ստեղծին ներքին վիճակները բերեղա-
ցնող ներշնչարան — պատճառը կ'ըլլայ.
այսպէս կ'ունենանք պատկերներու եւ
խորհուրդներու ֆնարերգութիւն մը՝
հաստատուած զգացողութիւններու վրայ:

Հոգեկան վիճակ եւ բնութեան պատկեր-
ներ զիրար կը փոխանակեն:

Քերթողական միջոցներ

Իրապէս Գրիգոր գիտող մ'եղած է. իր
բանաստեղծական տաղանդին կեանք եւ
զօրութիւն տուողը տեսանող մ'ըլլալու
ձիրքն է, խանդոտ տեսանող մը: Դիտո-
ղութիւն եւ երեւակայութիւն իրեն հայ-
թայթած են բովանդակ ատաղձը՝ իր հո-
գեկան վիճակները ու տրամադրութիւն-
ները պատկերացնելու փոխաբերութիւն-
ներով: Ասկէ դատ կառուցման ինչ ինչ ձե-
ւեր, որ հեռտորական արուեստին միջո-
ցով իւրացուցած էր, ասոնք յաճախ իր
տաղանդը կաղմող ու էացնող նիւթեր ե-
ղած են:

Գրիգոր իրերը ու դէպքերը նկատելու
ինքնուրոյն եղանակ մ'ունի. սովորաբար
կը միտի նկատել ամէն ինչ՝ իր անձը,
աշխարհը, աստուածայինը, հակադրու-
թիւններով: Հակադրութիւնը իրեն հա-
մար պարզ գրական ձեւ մը չէ, այլ իրերը
նկատելու ճամբայ մը. ամէն իր ու եղե-
լութիւն իր աչքերուն եւ երեւակայու-
թեան կը ներկայանան հակադրութիւննե-
րով: Ծիշտ է որ ամէն ինչ այս եղանակով
նկատելը՝ կրնայ վտանգաւոր դառնալ,
սակայն Գրիգոր կը գտնէ այս հակադրու-
թիւնը՝ լաւ եւս այս երկուութիւնը,
մարդկային էութեան մէջ, ինչպէս նաեւ
բնութեան մէջ. իր գիտումն է հակադրու-
թեանց միջոցով տեսնել իրերու մէջ դո-
յութիւն ունեցող միութիւնը. միայն թէ
հակադրութեանց այս սկզբունքը կը կի-
րարկէ աւելի հոգեկան վիճակներու պատ-
կերացման միջոց. բնութեան մէջ գտնու-
ած հակադրութիւնները, ինչպէս լոյսին
եւ ստուերին, վսեմին եւ արտառոցին,
այնքան չի հետադասեր եւ չ'օգտադործեր:

Շատ յայտնի է պատկերներ ու տեսիլ-
ներ ստեղծող հօր երեւակայութեան մը
գոյութիւնը իր մէջ. աւելի աչքերու ե-
րեւակայութիւն մը քան թէ դուրս սրտի
երեւակայութիւն մը: Իր տեսողութեան
զգացողութիւնները կենդանի են. ունի

նաեւ երեւութապաշտները իրապէս տեսնելու ձիրքը, որով կրնայ արտաքսապէս պատկերացնել: Իրեն համար զգացողութիւն եւ գաղափար մէկ ակնարկով իրարմէ անբաժան կը ներկայանան, կարծես միութիւն մը կազմէին: Այս պատճառով իր բանաստեղծութիւնը պատկերներու եւ խորհուրդներու բանաստեղծութիւն է. պատկերին՝ նիւթին ետեւը քողարկուած կը նշմարուի խորհուրդին անեղբուրութիւնը: Հետեւաբար իր պատկերները՝ որ ստէպ յանդուզն են, ներքին ու հոգեկան երեւոյթներուն վայրկենական թանձրացումներն են: Միայն թէ փոխանակ վերածելու զանոնք համառօտ ասացուածքի մը, կը յանձնէ ինքզինքը երեւակայութեան սանձարձակ յորձանքին: Ասիկա արդիւնք է նկարչականին համար ունեցած իր ճաշակին, այլ իր ներքին վիճակները, եւ կամ զգացումները կարելի եղած ձեւերով պատկերացնելու եւ արտայայտելու սովորութեան. այլապէս բառեր կամ ասացուածքներ, իւրաքանչիւր վիճակի կամ զգացման մէկ կերպարանքը ներկայացնելով, նպատակ ունին լրիւ զգացնել այդ վիճակին կամ զգացման ամբողջութիւնը: Նուազ չէ նաեւ զգայականութիւնը, ազդու եւ խորունկ զգայականութիւն մը: Նարեկի Աղօթքները, թէպէտեւ իմաստանայից ու խորհրդածուած, բայց կարելի է ըսել թէ արդիւնք չեն բուն մտածման, այլ զգացման. բառերուն ետեւ կը գըտնենք բանաստեղծին սրտին բարախիւնը, իր ջիւղերէն հոսածը, որով բառերը կեանք կ'առնեն ու ներքին կրակով կը հրդեհին, շարժուն եւ խօսուն կը դառնան. իսկ հեղինակը այդ Աղօթքները յօրինած պահուն՝ համակ պրկուած, հրկիզուած եւ տաղնապալից վիճակի մը մէջ կը գտնուի: Մեղքի, վերջին դատաստանի, դատապարտութեան մտածութիւնները՝ սարսափի սրտաբեկման եւ խռովութեան զգացումներով ամբողջովին կ'ողողեն բանաստեղծին էութիւնը, կարծես երբեք չկարենալ ելլելու այդ վիճակէն. այնքան իր հոգեկան տաղնապալները արտայայտող ասացուածքներու յորդուութիւն կայ: Սա-

կայն բանաստեղծին աչքերը երբեմն ալ կ'ուզողուն սարսափի խաւարէն անդին՝ նկատելու անհուն Սէրը՝ որ Գթութիւն ալ է, կամ Գթութեան մայրը. այս սակաւ վայրկեաններուն՝ իր յոյսերը, իր տենչերը, վերանայու եւ բարձրանալու իր թեւածումները լուսեղէն մըրիկ մը կը կազմեն՝ պահ մը ամէն ինչ պայծառացնելով: Ասով հանգերձ՝ անհուն Սիրոյն քաղցը Գրիգորի մէջ միշտ քաղց կը մնայ, ու այս քաղցը միշտ աւելի կ'աճեցնէ Գրիգորի յուզող զգայնութիւնը. Նարեկ անկեալ ու հիւանդ մարդուն Աղօթամատենին է:

Ի՞նչպէս կը ներկայանայ արդեօք այս վիճակներէն ու տրամադրութիւններէն բխած բանաստեղծութիւնը: — Պէտք է ըսել թէ ինքնուրոյն բնոյթ ունեցող բանաստեղծութիւն մըն է: Կը ծնանի խորքէն, բայց արտաղեղման կերպը ու արտայայտութիւնն ալ կը ձեւաւորեն եւ յատուկ մարմին մը կ'ընծայեն: Կ'ըսէ Victor Hugo. «Ոճը նիւթին խորքն է, որ անդուլ դէպի մակերեսը կը հանուի» գրողին կողմէ. սակայն բանաստեղծը դէպի մակերես կը հանէ իր կիրարկած քերթողական արուեստին միջոցներով. որով Նարեկի բանաստեղծութիւնը միաժամանակ ծնունդն է իր հոգեկան վիճակին ու իր խօսքին, այսինքն՝ ըսելու ձեւերուն:

Ապահովաբար Նարեկացիի ծանօթ չեն Գորդիասի հետեւեալ խօսքերը. «Բառը իր փոքր ու անտեսանելի մարմնով կ'արդիւնաւորէ աստուածային գործեր, որովհետեւ կարող է մեղմել վախը, անհետացնել ցաւը, ուրախութիւն ներշնչել, աւելցնել գութը: Ես բովանդակ բանաստեղծութիւնը կը նկատեմ տաղաչափուած բառ մը. բայց այս բառը կը դնէ լսողին հոգւոյն մէջ սարսուռ մը, արտասուել տուող յուզում, գորովալից բաղձանք մը»: Գրիգոր կարծես ըմբռնած է բառին կատարելիք այս եղանակն ու ամենազօր դերը, անոր թովչանքին ոյժը, եւ ազատօրէն կ'օգտագործէ Նարեկի մէջ իր նպատակներուն համար: Սովորական բառերէ ու վերացականներէ աւելի՝ կը դիմէ քերթողական ձեւերու. մակդիրներ, փո-

խարերութիւններ, հակադրութիւններ ամէն տեսակ. բառերու կ'ընծայէ նոր իմաստներ, կը կազմէ նոր բաղադրութիւններ. ծանօթ է իր սէրը ամէն ինչ թանձրացեալ ու պատկերներով ներկայացնելու, ինչպէս նաեւ ձգտումը յորդելու, կուտակելու, մասնաւորապէս որսակումները եւ մակդիրները. ասոնք խիտ շղթայուած են՝ շեշտուած ամանակի մը զնացքով. դարձեալ նաեւ նմանահնչիւն ձայներու շարքերը, որ ներքին վիճակի մը համապատասխան երգը կ'ուզեն արձայանել. ասոնք բոլոր կարծես նախադրուած ծրագրի մը նկատառումով պատրաստուած են, ու պէտք է ըսել որ ստէպ կը ստեղծեն ուժեղ, ցայտուն եւ գունաղեղ պատկերացումներ ներքին վիճակներու եւ տրամադրութեանց:

Նարեկի մէջ այս բանաստեղծութիւնը հեղինակին «ես»ին յեղաշրջման բանաստեղծութիւնն է, և այս պատճառով յարափոփոխ. հոգեկան գիծը միեւնոյնը մընալով հանդերձ, միշտ ալ ձեւաւորուելու եւ այլափոխուելու վրայ է, որովհետեւ բանաստեղծին ներքին վիճակներու շրջադաշտներուն կը հետեւի. ասկից է որ բանաստեղծական քնարին թրթռացման երգը երբեք իր լրման չի յանգիլ Նարեկի մէջ:

Կարելի է արդեօք տեսնել Նարեկացիի մէջ՝ իր կիրարկած արուեստով, ինքզինք

չյայտնելու փորձ մը, սանձուած յուսալքում մը, եւ կամ անանձնական մնալու նպատակ մը, այնպէս որ ընթերցողները կարելիութիւնը չունենան ոչ մէկ բան հետեւցնելու, ինչպէս կը նշմարուի արդի գրողներու շատերուն մէջ, որոնց մտքի հորիզոնը ո'րքան լայննայ եւ ո'րքան աւելի հետախուզեն՝ կը կրեն, որովհետեւ չեն կրնար թափանցել դիրենք չընկալատող խորհուրդին մէջ. ասկէ՝ ամենամեծ պատրանքը, որ կը ծնանի, մինչեւ որ օր մը թագաւորէ մեծ աւերը, հաւանօրէն Ուլինչը: Սակայն Գրիգոր, եթէ նոյն իսկ մտքին առջեւ երեւութանայ Ուլինչը, ինքը ծարաւն ունի Բացարձակին, ու այս ծարաւն է որ զինք կը պահէ յուսահատութենէ եւ ոչնչութենէ. իր Նարեկը կարծես Աստուածայինին իրականութիւնը չօշափելու զգայարանքը կը դառնայ:

Ինչ ալ ուզուի մտածել, պէտք է երբեք մոռնալ թէ Նարեկ ծնունդն է Գրիգորի հոգեկան-բարոյական կեանքին մըրթութիւններուն, սրտի աղեխարշ ճնշումներուն, անձկութեանց, խռովալից ալեկոծումներուն, հրակէզ ձեններումներուն, որոնց մէջ ապրեցաւ բանաստեղծը յղացած ու յօրինած ժամանակ իր Աղօթամատենը, որ եւ իր փառքը կը կազմէ:

Հ. ԿԻՒՐԵՂ ՔԻՊԱՐԵԱՆ